ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մարտի 2016 թվականի թիվ 35 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016թ. մարտի 14-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն և լրացում կատարելուն համաձայնություն տալու մասին» N 167 - Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի՝

1) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 70-2.1-3, 70-2.3-6), անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետի՝

ա. «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» բառերը հանել.

բ. «Բուսական աշխարհի մասին» բառերից հետո լրացնել՝ «Բուսասանիտարիայի մասին» բառերը.

2) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 70-2.2-23, 70-3.2-23, 70-4.1-31) անձնագրերի 10-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ա. «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին», «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու /կոնցեսիայի/ մասին» բառերը հանել.

բ. «Բուսական աշխարհի մասին» բառերից հետո լրացնել՝ «Բուսասանիտարիայի մասին» բառերը.

3) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 70-2.1-6) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետի «Բնակչության զբաղվածության մասին» բառերը փոխարինել «Զբաղվածության մասին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. մարտի 16
ք.Իջևան